

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:  
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունուում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են  
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

## „ՄՇԱԿ“

### ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՑ 1887 ԹԻՒՆ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիւրով և նոյն պրօդրամայով: Մենք կը ստանանք սեփական  
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլ:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՐԱԿԱՆԱԿԱՆ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների մի-  
կիւնում, Թամաշեկի տանը):

Կայտարարութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետեւեալ հաս-  
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-  
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

#### ԲՈՎԱՆԳՐԱԿՈՒԹԻՒՆ

Մի համարելի միտք.—ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.  
Գրականական երեկոյնը. Արհեստավարաց ուսում-  
նարանի տարեկան ակադ. Հայոց թատրոն. Նա-  
մակ վերին-Աղուլիսից. Նամակ խմբագրին. Ներ-  
քին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԿԱՆԱԿԱՆ.—  
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ակա-  
մայ յանցանք.

#### ՄԻ ՀԱՄԱԿԱՐԵԼԻ ՄԻՏԲ

„Մշակ“ ընթերցողները յիշում են, որ  
տարիների ընթացքում մենք միշտ յայտնել  
ենք այն միտքը որ վերջապէս անհրաժեշտ  
է հիմնել մի համալսարան Անդրկովկա-  
սում: Շատերը գիտեն, նոյնպէս, որ այդ  
մտքին համակրում է և մեր հասարակու-  
թեան ինտելիգենտ մասը. եղան անձինք,  
որոնք արդէն գումարներ նուիրել են, կամ  
պատրաստութիւն յայտնեցին նուիրել յո-  
գուտ կովկասեան համալսարանի, եթէ այդ  
ուսումնական հաստատութիւնը գլուխ դա-  
րժմ ուրախ ենք որ մեր նորածին  
„Кавказское Обозрѣніе“ ուսուց- թեր-  
թը, յունվարի 12-ին, երբ ամբողջ Ռուսա-  
տանը տօնում է իր ամենահին համալսա-  
րանի տարեդարձը, հանդես է դալիս մի  
առաջնորդող յօդուածով, որտեղ յայտնում է  
նոյն ցանկութիւնը՝ վերջապէս իրագործ-  
ված տեսնել կովկասեան համալսարանը:  
Ճշմարիտ է ասում լրագրիւր որ ոչինչ  
այնքան չէ մօտեցնում, չէ եղբայրացնում

#### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

#### ԱԿԱՍՄԱՅ ՅԱՆՑԱՆՔ

#### III

Մի և նոյն երեկոյ — բժշկապետ Մ.... ստակովում  
էր խմայի հետ քաղաքի յետընկած թաղերից մի-  
նի հայոց եկեղեցու մէջ: Բայց նորապալաններից և  
քահանայից, պատկի հանդիսին եկեղեցում ներկայ  
էին միմյանի երկու վկաներ, երիտասարդ բժշկի  
երկու դասընկերներ:

Նորապալանները հազիւ եկեղեցուց տուն վերա-  
դարձած Մ.... գտաւ արդէն իր ընդունարանը լի  
այցելու հիւանդներով, որոնք սպասում էին բժշկի  
երևալուն.... Նոյն րոպէին նրա առանձնասենեա-  
կը մտաւ տեղական հաղուստով հաղված մի  
պառու. հայուհի, որին բժշկը խիստ ճանաչեց:

—Այդ ինչ է Շուշան, երեւում է որ քո բժշկական  
գիտութիւնները քեզ այլ ևս չեն օգնում, որ ինքդ  
դալիս ես բժշկի մօտ, ու մեզ պէս բժիշկներ  
գիմում, համար էր անում Մ...., մեկնելով իր ձեռ-  
քը այցելուին:

—Բժշկելու համար չեմ եկել, Գէորգ ջան, քեզ  
մի բան ունեւմ ասելու:

Շուշանը յայտնի էր ամբողջ Ն.... թաղի բնա-  
կիներին. նա համ մոցիւթ լուծիւնով էր  
պարագում, համ ժողովրդական բժշկութեամբ  
հեքիմութեամբ, համ էլ մանր առուտորով:  
Նա թաղի ամեն մի տան մէջ ազատ մտաւ ու-  
նէր, ուսում էր հերթով այս կամ այն տան խո-  
հանոցի մնացորդները, հաւաքում էր ամեն ըն-  
տանիւրից դէն գցած հագուստներ.... Շուշանը ա-  
մեն տեղ մտնելով, ամբողջ թաղի գաղտնիքները  
գիտէր:

—Գէորգ ջան, դու ի՞նչ գիտես որ ես քեզ ծը-  
կան երեխայ եմ տեսել ու ձեռքերիս վրա շատ  
եմ ման ածել, սկսեց խօսել պառու կինը:

—Գիտեմ, Շուշան, ժպտալով պատասխանեց ե-  
րիտասարդը:

—Ի՞նչ գիտես որ ես քեզ իմ որդու պէս եմ սի-  
րում:

—Խաւ.... գիտեմ....

—Բայց, որ այդպէս է, ինչ լսի ու գտնվիւն  
մի արա,—իմ այդ խօսքի համար չը նեղանաւ,  
որդի:

—Հրամայիւր, մայրիկ, ինչ պէտք է անեմ, որ  
գտնվիւն չանեմ:

—Քեզ հրամայեալ, որդի, ես իրաւունք չունեմ,  
միայն թէ խնդրելով եմ խնդրում, աղաչելով եմ

#### ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

##### ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՒՆԵՐ

Մինչ մի կողմից մեր մէջ առաջ են դալիս հա-  
տարակական բազմաթիւ խնդիրներ, միւս կողմից  
մեր ժողովրդի մի քանի շրջաններում ցրվացող  
մտաւոր անարթութիւնը մի տխուր պատկեր է  
հանդիսացնում: Մեր երկրի սնտեսական կեանքի  
ուսումնասիրութիւնը մեծ ոյժ է տուել աշխա-  
տանք է պահանջում: Մեր դպրոցական խնդիրը  
լուրջ ուշադրութեան և ինքնախաբեութիւնից ա-  
զատ դատողութեան է կարօտ: Մեր ամբողջ  
կեանքի և մտքի մէջ ամենակարևոր հասկացողու-  
թիւնները մտցնելու համար որոշ ուղղութեամբ  
գործելու անյետաձգելի պահանջ կայ: Այդ և այդ  
գործելու շատ հատարական հարցեր, որոնք լու-  
ծում են պահանջում, միանգամայն անհամապա-  
տասխան են այն մտաւոր անգործութեան, որը  
արտայայտւում է թէ՛ դատաւերում և թէ՛ կեն-  
տրոն համարվող քաղաքներում: Ուշադրութիւն  
դարձրէ մեր դատական նոյն իսկ ամենանշա-  
նաւոր քաղաքների վրա, և կը համոզվէ որ այն  
տեղ հասարակական մտաւոր գործունէութիւն  
համարեալ թէ չը կայ: Այդ մտաւոր անգործու-  
թիւնը ուղղակի կարող է մեղքնել ամեն մի նո-  
րաբարձր սկզբունք, ամեն մի հարց, որը տեղա-  
կան նշանակութիւն և ունի:

Թողնենք մեր ամբողջ, որի մասին շատ քիչ  
բան է արված, որը չը գիտէ դու ևս թէ ո՞ր  
կողմ պէտք է դալ, և ինչպէս պէտք է դալ:  
Թողնենք մի կողմ և այն շրջանները, որոնք մե-  
տաւոր կեանքի և մտաւոր գործունէութեան  
համարեալ թէ չը կայ: Այդ մտաւոր անգործու-  
թիւնը ինչպէս նախապատասխանութիւն չունի, բայց ինչ  
է անում մեր ժողովրդի այն երիտասարդ դասա-  
կարգը, որին ծանօթ են հասարակական հարցե-  
րը, որը տեղեկութիւն ունի ժողովրդի մտաւոր  
գործունէութեան մասին, որը զաղաւթիւր ունի մեր լը-  
րագրական, դպրոցական, եկեղեցական, գրախա-  
նական խնդիրների մասին: Իսկ այդ դատակարարը,  
պէտք է ասել, շատ էլ փոքր չէ: Գաւ է, որ մեր  
դատաւերում կազմում է տեղական երիտասար-  
դութիւնը, և որին մասնակից են փոքր ի շատ  
կրթված երիտասարդ վաճառականներ, փոքր ի  
շատէ զարգացած գործակալներ, արհեստա-  
ւորներ, զանազան ծառայողներ: Այդ ոյժերը մեր  
ուսուցիչների և ուսեալ երիտասարդների հետ  
միասին ամեն տեղ կազմում են մեր հասարակու-  
թեան մի ամենախաբարձր մասը: Գաւական փոք-  
րիկ կենտրոններում դրա մի տեսակ հասարա-

Գ. Ա.

աղաւթում՝ խմայի հետ մի պատկեր.... հայրը շատ  
նեղացած է....

—Ինչի՞նչ պատկեր, հարցրեց երիտասարդը  
ժպտալով....

—Մի բան կայ, որդի, որ միայն քեզ եմ կարող  
ասել. խմային քո հօր անհարգաւոր աղջկին  
է, նրա հանգուցեալ մայրը իր ջանքի ժամանակ  
հօրը սիրուհի է եղել, ու աղջկիկ ինքն էլ այդ  
բանը խիստ չը գիտէ: Հիմա ինքը մտածիր. լինե-  
լու բան է որ դու պատկերս քրոջ հետ....

—Արդէն ուշ է, Շուշան, ես հէնց այս րոպէին  
եկեղեցուց եմ դալիս.... ես արդէն նրա հետ պը-  
սակված եմ, արտասանեց երիտասարդը դողդոջուն  
ձայնով....

—Վայ, վայ, այդ ինչ արեցիր, այդ ինչ....

—Եւս, Շուշան, տեղ ես գտել դու էլ լուրաւե-  
լու.... Այստեղ հարեան անհետկում քան հոգու-

չափ հիւանդներ սպասում են ինչ և քո բաւարը  
կը լսեն.... Ինչ պիտի մտածեն նրանք.... Գնա, ես  
նամակ կը գրեմ հօրս.... Չէ, ասելի լաւ է  
սպասել, ես իսկոյն նամակ կը գրեմ.... Գաւ ինքը  
կը տան հօրս....

Գտնաւ դէմքով, ամբողջ մարմնով դողալով ե-  
րիտասարդը մօտեցաւ գրասենյակին:

—Հիմա եմ հասկանում, հիմա եմ հասկանում,  
անգաղար միտմիտում էր նա նամակը գրելու  
ժամանակ:

կական գործունէութիւն ունեն: Այդ, այսպէս ա-  
սած, գաւական երիտասարդութիւնը օգնում  
է ուսումնարաններին, հիմնում է տեղական թատ-  
րոն, ձեռնարկում է տեղական հասարակական  
գործունէութիւն, աշակցում է մեր լրագրութեա-  
նը, և շտապում է միշտ արձագանք տալ ամեն  
մի հատարական նախաձեռնութեան: Սակայն  
այդ բոլորը կատարվում է այնպէս թույլ կերպով  
շատ անգամ այնքան անհետադարձ և այնքան  
պատահական ձևով, որ մեծ նրբութեամբ և ամբ  
պէտք է հետեւել՝ այդ բոլորի մէջ մի ընդհանուր  
կապ գտնելու համար: Այդ երիտասարդ ոյժերի  
գործունէութիւնը շատ թույլ և անդոյն կերպով է  
անցնում, որի պարզ ապացոյցը կարող է լինել  
հէնց մեր գաւական երիտասարդութեան այդ-  
ման զրոյթները: Մտաւոր կեանքի բացակա-  
ւեան շատ ակնդէպ է նպաստում այդ հանգաման-  
քին:

Բայց պէտք է խոստովանել և այն, որ այդ մը-  
տաւոր կեանքի կարևորութիւնը մեր գաւական  
երիտասարդութիւնը շատ թույլ կերպով է զգու-  
մի: Մի նախազգած, որոշ գործունէութիւն ոչ թէ  
միայն կարող էր ասելի սերտ կապ հաստատել,  
այլ և կը նպաստէր տեղական շատ հարցերի  
պարզելուն: Այդ, ինչ մտաւոր գործունէութիւն  
կարող է տեղի ունենալ, քանի որ ուսումնարան-  
ներից դուրս մեր մէջ ոչինչ մտաւոր կենտրոններ  
չը կան: Մենք չունենք գիտական դասախօսու-  
թիւններ, չունենք կազմակերպված հրապարակա-  
կան ժողովրդական դասախօսութիւններ, չունենք  
գրականական երեկոյններ,—և այդ ոչ թէ միայն  
գաւական քաղաքներում, այլ և այնպիսի կեն-  
տրոններում՝ ինչպէս Բագու, Երևան, Նոյն իսկ  
Թիֆլիս և այլն: Սակայն եթէ մենք ներկայումս  
չենք կարող ունենալ գիտական և ժողովրդական  
դասախօսութիւններ, միթէ՞ չենք կարող ունենալ  
գրեմ գրականական երեկոյններ, հիմա չենք նոյն  
իսկ մեր գաւական այն երիտասարդութեան  
հնորհիւ, որի մասին վերեւ յիշատակեցինք: Այ-  
թէ միայն կարող ենք ունենալ, այլ և պէտք է  
ունենանք,—կը պատասխանէ մենք: Գրականա-  
կան երեկոյնների նշանակութեան մասին ճառելը  
աւելորդ ենք համարում. այդքան միայն կը յի-  
շենք, որ դա մի ուշադրութեան արժանի միջոց  
է ոչ թէ միայն մտաւոր գործունէու-  
թեան մի նոր դուռ բաց անելու, ոչ թէ միայն  
մի փոքր նպաստելու մեր ամբողջ մտաւոր շար-  
ժողովները, այլ և ուսումնասիրելու տեղական  
շատ կարևոր խնդիրներ: Գրականական երեկոյնը  
կարող են կազմվել այնպիսի տեղերում, ինչպէս

Այդ րոպէին անեակի դուռը բացվեցաւ և  
դրան շեմքին երեկոյն մի աղջկիկ. դա խմայ էր:  
Նրա ամբողջ երևոյթը մի հնորայի տղաւորու-  
թիւն էր գործում. նրա սև հագուստը, որ հնոր-  
հայի կերպով նստած էր նուրբ կապուսածքի վրա,  
շատ էր սազում նրա խիտ խարտեալ մազերին և  
գեղեցիկ, թէև գունատ դէմքին: Նրա գունատ,  
յուզված դէմքը և կատարեալպէս սև, զգացմուն-  
քով լի աչքերը՝ արտայայտում էին վճռողակա-  
նութիւն....

—Նա արագ է թէթեւ քայլուածքով մօտեցաւ  
Գէորգին, և յուզված, թէև որոշ, բարձր ձայնով  
արտասանեց.

—Ես ամեն բան լսեցի, Գէորգ:

Ապա դնելով իր ձեռքը դու սեղանի մօտ նըս-  
տած բժշկի ուսի վրա, նա վճռողական կերպով  
աւելացրեց:

—Վեր կաց տեղիցդ, սիրելիս, և գնա քո գոր-  
ծին՝ հիւանդները վաղուց է քեզ սպասում են,  
իսկ նամակը ես եմ գրելու հօրդ:

Բժշկապետը վեր կացաւ տեղից, երկու ամու-  
սինների հայեացքները միմեանց հանդիպեցին. ա-  
ռանց իրար մի խօսք ասելու, լուռ կերպով նա-  
յեցին երկուսն էլ միմեանց վրա և երիտասարդ  
բժիշկը շտապով դուրս եկաւ ընդունարանը:

Խմային նստեց գրասենյակի մօտ և սկսեց գրել  
նամակը: Նամակը վեջացնելուն պէս, նա դրեց



են Շուշի, Շամախի, Երևան, Ալեքսանդրոպոլ, Բազում, Հին-Նախիջևան, Աջդուխտ, Նուխի և այլն... Այդ գործի գլուխ կարող են անցնել տեղական ուսուցչական խմբերը, պատրաստված երիտասարդների հետ միասին: Գործի գլուխ կանգնողները հանձնարարենք է կախված, ի հարկէս գործին գրաւիչ և նպատակաւարմար ուղղութիւն տալ: Գրականական ֆերկոնները հիմը դառնալով տեղական մտաւոր գործունէութեան, իրանց մատչելիութեամբ ոչ միայն կը դրաւեն զաւառական երիտասարդ դասակարգը, այլ և կարող են ազդեցութիւն ունենալ թէ ամբողջի, և թէ իրական դասակարգի վրա: Գրականական երեկոնների ծրագիրը և ընթացքը շատ բազմազան և բազմ կարող է լինել. այդտեղ կարող են շօշափել գրականական, դպրոցական, թատրոնական, գիտնական, տեխնիկական, հասարակական ամեն տեսակ խնդիրները: Այդ մասին խօսելը և ծրագրի որոշելը գէշէ առ այժմ աւելորդ է. թոյլ ենք տալիս մեզ միայն մի համեմատ կարծիք յայտնելու գրականական երեկոնների, այսպէս ասած, տեղական նշանակութեան մասին: Ինչպէս յիշեցինք, գրականական երեկոնները կարող են շօշափել ամեն տեսակ կը թիւն խնդիրները: Սակայն, եթէ մեր գաւառական երիտասարդութիւնը կը ձգտէ ձեռք առնել այդ խնդիրը, վատ չէր լինի, եթէ իր գործունէութեան մի նշանաւոր մասը դարձնէր տեղական հայրենի ուսումնասիրութեան վերջին տեղական հայրենի ուսումնասիրութեան վերջին տեղական հայրենի մէջ հիմնվում են գրականական երեկոններ, ի հարկէ այդ երեկոններին կարող են խօսել հայրենի գրականութեան մասին, Ռուսաստանի պատմութեան նշանաւոր պերիոդների մասին, եւրոպական կուլտուրայի մասին, լրագրութեան մասին և այլն: Բայց նոյն Բազումի մէջ հիմնված գրականական երեկոններին խօսողներին մեծ նիւթ կարող է տալ նոյն իսկ Բազումի նահանգի ժողովրդական, անտեսական, տեղագրական կեանքը. նոյն իսկ Բազումի նախնադործութեան. խնդիրը և այլն: Երևանի նահանգի բարձրագոյն ուսումնական խնդիրը հետաքրքիր դաստիարակութեան նիւթ կարող է տալ Երևանում խօսելու համար: Շուշի մէջ հետաքրքիր և օգտակար դաստիարակութեան նիւթ կը լինի Ղարաբաղի անալիս արդիւնաբերութեան ուսումնասիրութիւնը: Ալեքսանդրոպոլի մէջ խօսելու համար չը պէտք է մոռնալ Շիրակի արդիւնաբերութիւնը և այլն և այլն: Այդ ուղղութեամբ ընթանալով դաստիարակների խումբը երկու գործ միասին կատարած կը լինէր՝ մի կողմից գրականական երեկոնների միջոցով մտաւոր կեանքը կը զարթեցնէր տեղական հասարակութեան յայտնի մասի մէջ, իսկ միւս կողմից կը նպաստէր մեր երկրի գրութեան ուսումնասիրութեան կարևոր և անհրաժեշտ գործին, որի վրա այժմ ամենայնպէս ժամանակն է ուղարկելու դարձնելու:

Խ. Մ.

ԱՐՀԵՏԱՒՈՐԱՅ ՌԵՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱԿՏԸ

Յունվարի 11-ին, կիրակի օր, ինչպէս յայտարարված էր քաղաքներում, կայացաւ Թիֆլիսի

թերթը ծրագրի մէջ և առանց մի խօսք արտասանելու յանձնեց ծրարը Շուշանին:

IV

Մարիամիկը իր տունը վերադառնալով գտաւ իր հօրը մի և նոյն դրութեան մէջ. տխուր, յուսահատ, անհանգիստ, յուզված, վրդովված... Երևում էր որ ծերունու սրտի և ուղեղի մէջ մի ներքին սարսափելի խուլ էր կատարվում, որ խաղաղ մաշում էր նրան...

Աղջիկը չը գիտէր ինչ ասէր հօրը, ինչպիսի միութեանք նրան իր եղբոր մօտ գնալն էլ անհետեւանք եղաւ... Նա իր կանացի նուրբ զգացմունքով զգում էր թէ իր ներկայութեամբ ձանձրացնում էր ծերունուն նրա այդ տեսակ յուզված ժամանակ, և առանց հօր հետ մի խօսք անգամ խօսելու, հեռացաւ իր սենեակը, որտեղ կարող էր ազատ կեդրով լաց լինել...

Նա լսեց միայն որ մէկը զանգակ էր տուել իրանց տան դռանը, լսեց որ աղախինը բաց արեց փողոցի դուռը:

—Ո՛վ էր, հարցրեց օրիորդը իր սենեակը մըտնող աղախինն:

—Պառաւ Շուշանն էր, օրիորդ, մի նամակ բերեց ձեր հօրը ու իսկոյն գնաց, առանց ոչինչ ասելու:

—Նամակը տուեցի՞ր հօրս:

Միջոյցէն Արհեստագործաց դպրոցի տարիկան հաշվետուութեան հանդէսը:

Ժամը 11-ից արդէն ուսումնարանի շինութիւնը, որ զարգարված էր դրօշակներով, սկսեց լցվել ժողովրդով: Դահլիճը, ուր պէտք է կատարվէր ուսումնարանի ակտը, զարդարված էր պատկերներով, որոնցից աչքի էին ընկնում թագաւոր Կայսրի մեծագիւր պատկերը և ուսումնարանի հիմնադիր Իշխան Եղան թագունի պատկերը: Դահլիճի պատերի վրա կայրած էին ուսումնարանի Արհեստագործաց ուսումնարանի երկու դաստիարակների ձեռակերտ գործերը և թէ միւս աշակերտների աշխատանքները:

Ուղիղ ժամի 12-ին մտաւ դահլիճը Թիֆլիսի նահանգապետ գեներալ Գրոման, ընկերակցութեամբ փոխ-նահանգապետ Իշխան Երվանդի: Բացի դասուցից հանդիսին ներկայ էին Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Ս. Մատիսով, դոմայի ձայնաւորներից շատերը, պետական ուսումնարանների մի քանի դիրեկտորները, Թիֆլիսի ժողովրդական ուսումնարանների դիրեկտոր Գարսի իր օգնականով և այլք:

Արհեստագործաց ուսումնարանի դիրեկտոր պ. Խարկով, ամբիոն բարձրանալով, սկսեց կարգաւիր վերահայեցողութեանը յանձնված ուսումնարանի մանրամասն հաշիւը: Այդ հաշիւը երևում է, որ Թիֆլիսի քաղաքային Արհեստագործաց ուսումնարանը բացվել է 1880 թվ. սեպտեմբերի 28-ին, ուրիշն ուսումնարանը այս տարի մտել է իր գոյութեան եօթերորդ տարին: Այդ ժամանակամիջոցում ուսումնարանը միայն երկու անգամ դուրս է թողել աւարտող աշակերտներ՝ անցելա տարի, և այս տարին: Անցելա 1885 թվ. աւարտել են իրանց ուսման ընթացքը 16 հոգի, իսկ այս տարի 22 հոգի, ուրիշն ուսումնարանը իր գոյութեան ընթացքում տուել է 38 աւարտող աշակերտներ:

Արհեստագործաց ուսումնարանը բաղկացած է չորս դաստիարակից երեք բաժանմունքներով. երեք ազգութիւնների համար—ուսման, վրացիների և հայերի համար երեք բաժանմունքներում և բոլոր աւարականը դաս են տրվում մայրենի լեզուով, բացի ուսաց լեզուից, պատմութիւնից և Ռուսաստանի աշխարհագրութիւնից, որոնք բոլոր բաժանմունքներում ևս աւանդում են ուսաց լեզուով: Արհեստներից սովորեցնում են հիւսնութիւն, փականագործութիւն, դարբնութիւն և ձուլումն (литейное ремесло). Արհեստագործաց ուսումնարանում աւանդում են հետեւեալ աւարականը. կրօնագիտութիւն, ուսաց լեզու, մայրենի լեզու (վրացերէն և հայերէն), ընագիտութիւն, տեխնոլոգիա, թուաբանութիւն, երկրաչափութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, հաշուապահութիւն, գծագրութիւն, նկարչութիւն և վազելագործութիւն: Թիֆլիսի Արհեստագործաց ուսումնարանի պահպանութեան համար որոշված էր 1886 թվ. համար 31,500 ռ., որոնցից 6,000 ռ. գոյանում է օժանդակ գումարի պրօցէնտներից, 2,000 ռ. աշակերտների ձեռակերտներից և 23,500 ռ. արը:

—Այո:

Յանվարի մի սուր աղաղակ լսեց ծերունու սենեակից և մի խուլ ձայն, կարծես թէ մի ծանր բան ընկաւ յատակը:

Երկու կանայք վազեցին ծերունու սենեակը: Ծերունի Մ... ուշաքալով ընկած էր գորգի վրա... Հիւանդին տեղափոխեցին անկողինը:

V

Կանչված բժիշկը ըննեց հիւանդին, բայց դեռ ոչինչ որոշ չը կարողացաւ ասել նրա դրութեան մասին: Նա ասեց միայն որ հիւանդին անպայման հանգստութիւն է հարկաւոր, խոստացաւ ամբողջ օրը ծերունու անկողնու կողքից չը հեռանալ, բայց մի և նոյն ժամանակ խտով արգելեց Մարիամիկին մտնել հիւանդի սենեակը:

—Հիւանդին դուք ոչինչ օգուտ տալ չէք կարող, իսկ անդադար յուզվելով ու լաց լինելով ձեզ միայն կը վնասէք, աւելացրեց բժիշկը: Այդպիսով դուք ձեզ կատարեալապէս կը մաշէք, չարոճակեց նա. աւելի լաւ է, օրիորդ, գնացէք ձեր սենեակը և հանգստացէք:

Մարիամիկը անցնելով այն սենեակով, որտեղ մի քառորդ ժամ առաջ ուշաքալովիցս էր հայրը, նկատեց գորգի վրա ընկած մի բաց արած նամակ: Նա կուսացաւ, բարձրացրեց նամակը, — դա իրան լաւ ծանօթ ձեռքով էր գրված, դա Իմայի

վում է քաղաքային դամարկղից: Բացի դրանից, դաման ուսումնարանի դիրեկտոր Լոմիկը ասել էր իր 400 ռուբլով 1886 թվ. համար, ուրիշն ուսումնարանի պահպանութեան համար որոշված է 31,900 ռուբլի: Ուսումնարանի վրա ծախս եղել է 29,826 ռ. 11 կօպէկ:

Արհեստագործաց ուսումնարան մտնելու համար 1886 թվ. խնդիրներ տուել էին 115 հոգի, որոնցից միայն 80 հոգի ընդունվեցան: Խնդիրը սովորեցնելու մեծամասնութիւնը կարող են էին հայերը և այդ պատճառով հայրեն բաժանմունքում որոշված թվից 11 հոգով աւելի աշակերտներ ընդունվեցան:

Արհեստանոցներում աշակերտները հետեւաւ կերպով են դասաւորված. փականագործական արհեստանոցում (сечарная) կան 109 աշակերտներ, որոնցից 32 ուսանող են, 48 հայեր և 29 վրացիք: Հիւսնութիւն սովորում են 67 աշակերտներ, որոնցից 13 ուսանող են, 36 հայեր և 18 վրացիք: Դարբնութիւն սովորում են 21 աշակերտներ, որոնցից 11 հայեր են և 10 վրացիք: Չուլարանում սովորում են 25 աշակերտներ, որոնցից 12 ուսանող են, 7 հայեր և 6 վրացիք: Այդ ցուցակից երևում է, որ աշակերտների մեծամասնութիւնը (59%) ընտրում է փականագործական արհեստը, իսկ փոքրամասնութիւնը 11,2% ձուլումն է սովորում:

1886 թվ. աւարտող 22 աշակերտներից 8-ը ուսման են կամ 36,4%, 8-ը վրացիք են կամ 36,4% և 6-ը հայեր են կամ 27,2%: Բարձր դաստիարակ փոխարկված աշակերտների թվից 24 ուսման են, 30 վրացիք, 43 հայեր և 1 հրէայ:

Պ. Խարկով, վերջապէս Կաշուեւորութեան ընթացքն ուսումնարանի մանկավարժական խորհրդի բարտուղարը դուրս կանչելով աւարտող աշակերտներից իւրաքանչիւրին, ուղարկում էր նրանց աւանդին կարգում նստող պատուաւոր հիւրերի մօտ, որոնց ձեռքերից աշակերտները ստանում էին իրանց վկայականները:

Հաշուեւորութիւնից յետոյ ներկայ եղող հանդէսականները մեծ հետաքրքրութեամբ և զարմացմամբ սկսեցին նայել հանդէս դրված աշակերտների ձեռակերտները, արհեստանոցները և առհասարակ ուսումնարանի բոլոր շինութիւնը, և ամեն յայտնի տեսնելով աշակերտների յառաջադիմութիւնը, յայտնում էին իրանց անհուն շնորհակալութիւնը ուսումնարանի դիրեկտոր պ. Խարկովին:

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Թատրոնական վարչութեան բոլոր ջանքը հասարակութիւնը դէպի թատրոն գրաւելու՝ ապարդիւն է մնում, և նա ստիպված դիմում է արտաւոր կարգի միջոցներին: Դարձեալ եթէ մի շատ ճիշդ թու է հասարակութիւն լինում է, այդ այն ժամանակ, երբ ներկայացմանը մասնակցում է պ. Աղամեան, այդ պատճառով կօմիտեալ ստիպված ընտրում է այնպիսի պիեսներ, որոնց մէջ աչքի ընկնող դեր ունի պ. Աղամեան: Փոյթ չէ եթէ

ձեռքն էր:

Մարիամիկը մտաւ իր ննջարանը և սկսեց կարգաւոր նամակը:

Ահա ինչ նամակի բովանդակութիւնը:

Հայր. Նա ամեն բան իմացաւ: Հանգստեալ մայրս մի ժամանակ ձեզ սիրելիս է եղել. իսկ ես ձեր աղջիկն եմ, ուրիշն Գեորգը եղբայրս է: Գուք քաջութիւն չունեցաք խոստովանել ճշմարտութիւնը, խոստովանել ձեր անցեալը, իսկ ձեր խղճը ձեզ տանջելով դուք վարագործվում էք աւանդական զգացմունքով, ծածկում էք ձեր դէմքին ազգասիրական, կրօնական դիմաւոր, արդեւելով Գեորգին պատկերել մի օտարուհու հետ, իբր թէ չուզենալով մի օտար տարրը մտնել հայ ընտանիքի մէջ: Ինչի պարզ չը խոստովանվեցիք... հին սերունդը ուղղում է մեր աչքերին միշտ անխալակաւ երևալ, ուղղում է երևալ մեր առջև անպայման բարոյական, կրօնասէր, ազգասէր, աւանդապահ... ինչի պարզ չը խոստովանվել իրողութիւնը, ինչի չափով էման իմ աղջիկն է և դու չես կարող ընտելեման օրէնքի դէմ մեղադրել և պատկերել քրոջ հետ: Եւ այդ դուք պէտք է անէիք, հայր, ոչ թէ միայն երկու օր առաջ, այլ դեռ շատ առաջ, որպէս զի մենք երկուսս զգուշանալիք միմեանց վրա սիրահարվելուց: Գուք քաջութիւն չունեցաք խոստովանել ձեր անցեալը, իսկ մեզ գործել տուեցիք մի ակամայ յանցանք... Այսօր-

այդ պիեսները գրական արժանաւորութիւններ չունեն, կամ անյարմար են մեր բեմի համար... Առաջինիս ապացոյցը երկու վերջին ներկայացումները. յունվարի 1-ին ներկայացնում էին ուսանողինակ Մ. Լեւոնտովի «Կիմականդէս» դրաման, իսկ 8-ին գերմանացի հեղինակ Բրախֆօգելի «Նարցիս» դրաման: «Կիմականդէս» Լեւոնտովի ամենաներկատաւոր հասարակ և Բայրոնի խիստ ներգործութեան տակ գրած ամենաթոյլ գրութեանից մէկը պէտք է հաշուել: Դա այն գրութեանիցն է, որոնք նշանակութիւն ունեն հեղինակի զարգացման պատմութեան մէջ: Լեւոնտով, «Կիմականդէս» գրելիս, ինքն դեռ որոշ զարգացում չէր կազմել իր հերոսների բնատուրութիւնների մասին, այդ պատճառով նրանք բաւական անզոյն են ու անընտան են դուրս եկել, և երևում է որ արտանկարված են ուրիշ պիեսներից: Համեմատաբար նոր ժամանակներում հրատարակվեցաւ «Կիմականդէս» մի ուրիշ խմբագրութեամբ որ գրված է առաջինից մի տասրի յետոյ և բոլորովին զանազանում է նրանից. բնատուրութիւնները այնպէս փոփոխված են, որ ճանաչել նրանց դժուար է: Այս շատ լաւ ապացոյց է, որ ինքն Լեւոնտով աւելի զարգանալով, տեսաւ թէ որքան թերի էր իր գրութեանը: Բայց այս երկրորդ խմբագրութիւնը չունենալով առաջինի էֆֆեկտներ, բեմի վրա չէ ներկայացվում:

Գալով Բրախֆօգելի «Նարցիս», թէն նա իր գրական արժանաւորութիւններով աւելի բարձր է «Կիմականդէսից», բայց բոլորովին անյարմար է մեր բեմին: Գործողութիւնը պատահում է XVIII դարում: Հեղինակը ընդունելով որ ունի իրենից ծանօթ են Ֆրանսիայի յիշեալ դարու պատմութեանը, պալատական ինտրիգաներին, գրական ու փիլիսոփայական շարժումներին, այդ բոլորի վրա և կառուցել է իր դրամայի գործողութիւնը: Եւ քանի որ մեր թատրոնի հասարակութեան ամենամեծ մասը ոչինչ զաղափար չունի դրանց մասին, այդ պատճառով ինչ որ այդ երեկոյ բեմի վրա կատարվում էր՝ նրա համար մի կատարեալ հանելուկ էր:

Ասել աւելորդ է, որ երկու ներկայացումների հերոսն էլ պ. Աղամեանն էր. Ժամանակներին Բրախֆօգելի վերջին «Կիմականդէսի» մէջ մեռնելու նախորդ տեսարանում շատ լաւ էր տ. Գոհարիկ: Երկու ներկայացումն էլ միւս մասնակցողները շատ թոյլ էին:

Nemo

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԽՈՒՑ

Գեկտեմբերի 29-ին

Գեկտեմբերի 20-ին սիրողների խումբը խաղաց «Օրիորդ Բերդանց» պիեսան բարեգործական նպատակով, այն է յօգուտ ուսումնարանի ընթերցարանի:

Ուշադրութեան արժանի տեղական հանդամանքները, պէտք է ասել որ ներկայացումը լաւ անցաւ. բայց աւելի լաւ կանցնէր, եթէ սիրողների մի քանիսը լաւ սովորած լինէին իրանց դերերը: Շնորհակալ պէտք է լինել տեղական սիրողներից,

պէիս մենք կապվեցանք ամուսնական եկեղեցական կապերով: Այժմ մեզ մնում է միայն ապրել իրար հետ, ոչ թէ իբրեւ ամուսին ամուսնու հետ, այլ իբրեւ քյոր եղբոր հետ:

Համա.

Մարիամիկը կարգաւոր նամակը, կրկին կարգաց, տառն անգամ, քան անգամ սկզբից մինչև վերջը կարգաց այդ նամակը,— և դարձեալ չէր հաւատում իր աչքերին: Նրա մտածմունքները մոլորվում էին, ուղեղը խառնվում էր, նա այլ ևս ոչ ցաւ էր զգում, ոչ էլ ընդունակ էր լաց լինել... Նա անշարժ, քարացած էր մնացել, չուած, անկենդան աչքերով նայելով նամակի տողերի վրա... Նա զգում էր թէ մէկ անգամից մի մեծ, մի թանգաղին բան էր կորցրել՝ հաւատ դէպի բարոյականութիւնը, դէպի իդէալականը, դէպի ընտանեկան սրբութիւնը...

VI

Մի քանի րօպէ էր արդէն որ Մարիամիկի ննջարանի դռանը բաղկում էին,—բայց նա ոչինչ չէր լսում... Վերջապէս հիւանդին խնամող բըժիկի ձայնը արթնացրեց նրան իր անշարժ, անգալ, քարացած դրութիւնից...

—Օրիորդ, օրիորդ, ինչպէս չուտով եկէք, ձեր հայրը շատ վատ է...

Վ.—յի:



որոնք իրանց աշխատութիւնը չէին խնայում աշուշտի ոգտաւէտ ներկայացումներէ համար: Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ դատաւներում իրական սեռի ներկայացուցիչները մի տեսակ նախապաշարմունքով են վերաբերվում ղէպի բռնի, և չեն ուզում բռն ղուրս գալ, չէ կարելի շնորհակալութիւնը չը յայտնել առանձնապէս տ.ա. Վ. Ռաֆայէլեանին և Ն. Ամբասնին, որոնք ամենաշն ուրախութեամբ մասնակցեցին ներկայացումնը: Այդ իրողութիւնը շնորհակալութեան արժանի է մասնաւոր այն պատճառով, որ միւս մի քանի ագուլէի օրիորդները և տիկիները ոչ միայն երբեք չեն մասնակցում բարձրագոյն նպատակներով տրվող ներկայացումներին, այլ և իրանք ամենիդէ նախապաշարմունքով են վերաբերվում ղէպի բռն ղուրս գալը: Այդպիսիները պատիւ չեն կարող բերել ագուլեցիներին. նման հասարակութեանը: Այդ ներկայացումնը տոմսականի վաճառումից դոյացաւ մօտ 97 բուբլի, ծախք եղաւ 20 բուբլի, այնպէս որ ղուտ արդիւնքը հասնում է 77 բուբլու: Ներկայացումն արդիւնքի ի նդկատի առնելով, կարելի է ասել, որ այս անգամ ներկայացումը նախորդներէից աջողակ էր: Տոմսականը վաճառոււ մէջ միծ օգնութիւն ցոյց տուեց հոգաբարձու պ. Մնացականեանը, որը աղբիւրի ղէպերեում չէ խնայում իր անջակցութիւնը, և արժանի է շնորհակալութեան: Ներկայացումից դոյացած փողով պէսք է հարստացվի ղլիսատուրպէս ընկերացարանի մանկական բաժնի:

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 8 յունվարի

«Արձագանք» շաբաթաթերթի № 48-ի ընդդիմախոսությունն ըստմամբ պ. Ն. Մելիք-Արամյանի մի համակ է տպել, որ ամբողջապես ուղղված է իմ անձնաւորությունն դեմ:

«Վրձադաշնակ» շարժաթիվերից, տպիչով վերտ-  
րյիչեալ պարոնի նամակը, խմբադրական ծանո-  
թութիւնսն մէջ ասում է թէ՛ «Վշակը» շատ հառ-  
կանաւի պատճառներով չէ կամեցել տպել այդ  
նամակը, երկի, ակնարկելով այն բանի վրա, որ  
ես պատկանելով «Վշակի» խմբադրութեան ան-  
դամներին թվին, «Վշակը» այդ պատճառով կողմ-  
նապահութիւն է արել և չէ կամեցել տպել վերո-  
յիշեալ նամակը: Եւ ինչ հաւատարմացած եմ, որ  
այդպիսի մի նամակ, ում անհատությունիւն դէմ  
է ուղղված լինէր, տեղ չէր գտնի «Վշակի» սիւ-  
նակների մէջ, որովհետեւ այդ բովանդակութեան  
նամակները հասարակական ոչինչ հետաքրքրու-  
թիւն և նշանակութիւն չունեն: Եւ ճշմարիտ, այդ  
փոքր կերթալ, եթէ իւրաքանչիւր մասնատուր տան  
մէջ խոսածը և ասածը հրապարակ հանդէս է բնդ-  
րապահութիւնսն նիւթը դառնար, այն ժամանակ մեր  
ընկերութիւնը կը դառնար կոտարեալ «բամբա-  
տանքի բազար», և բոլոր հասարակական նորոգերը  
նուազուկեան կը տրվին:

իս համոզված եմ, որ «Արձադաճի» պ. խմբ. ազդեր տան մեջ, որպես նաև մի մասնաւոր տան մեջ, խօսվում և տպւում է շատ բան դանա- ւան անձնաւորութիւնները վերաբերմամբ. եթէ այդ անձնաւորութիւններից իւրաքանչիւրը, մի իւրը տեղեկանալով իրանց վերաբերութեամբ ա- թածները մտախ, մի-մի ընդդիմախօսական նամակ ուղղել «Արձադաճի» խմբազուրութեանը տպելու անմար, ակնարկած «Արձադաճի» պ. խմբադիրը ատ հասկանալի է, պատճառն էլ ու՛ր էլ չէր ուղի այդ նամակների:

Գառնանք այժմ պ. Մելիք-Աղամանյանին Աճառի պարոնը ինչ է գրում. «Գուցէ հիմա եւ լուռնայի, եթէ պ. Զ. Տէր-Մարկոսեանց պատշաճութեան, եթէ չտեսնուիլ լան, չախը չանցկացնէր»։ Տ. Մ. (Թէ պ. Լ. Մ. Ա.) 1880 թվին եթէ անհիշողելու թիւիւններ չը տար «Մշակի» աշխատակից, Ասիացուն, վերջինս էլ չէր գրիլ իր ֆէլիէտօնը, այն տեսակ, որ այդտեմ անախարստ թիւիւնների հետ տեսաւ դատարար, և որեւէն բժշկապետ Գառնարեանն էլ չէր հիւնուիլ այդ ֆէլիէտօնի վրա «Մեղուի» մէջ իւր մի շարք քարձակողական ոգևորածներէց միւնում ինձ եւ՛ որպէս գէնք գործ իր զնիլ բժշկիւն—պ. Բաբայեանի դէմ, որի միակ անցանքը կեանքին ազատելն է եղել (այո՛ւ, դա ե՛տ յանցանք է պ. Բաբայեանի կողմից) և ո՛չ թէ ե՛տ իւղցնելը, որպէս կողէին մի կարգ մարդիկ։

այց պ. Զ. Տ. Մ. թէ այդ, և թէ դէտուգէն պ. Բաբայեանի մոտ պարոնսն աղախօսելը քաւաւ

կան չը համարելով՝ այս մտանքը էլ մի մասնա-  
ւոր տան մէջ բազմաթիւ հիւրերի առաջ առանց  
կարմրելու յայտնում է, որ ես իմ խլովկեանս հա-  
մար բժշկիցս զանգատելել եմ իրան—Տէր-Մարկո-  
սեանին: Մինչդեռ դա բոլորովին սուտ է, ապա  
ուրեմն չարախօսողներն Բարաքիանի, վրա՝ և  
այլն:

Պ. Ալեկ-Աղամանյան, ինչպիսի երևում է, լսողութեան հետ յիշողութիւնն ևս կտրցրել է, կամ, որ աւելի հասանական է, իրան անձը արդարացնելու համար, վեց տարի լետարդիական քնով քնելուց յետոյ, ուրանում է փաստերը:

1880 թվին, պ. Մէլիք-Աղամեանցի իշխանու  
տարին, չեմ յիշում որ ամսին, մի գեղեցիկ առա-  
ւօտ զալիս է պ. Մէլիք-Աղամեանց «Մշակի»  
խմբագրութիւն յուսանատ ու զայրացած, և դա-  
նացած կերպով պատմում է խմբագրութեան բո-  
լոր անդամների ներկայութեամբ, որոնց թուամ  
էր և պ. Ափսային, իր հետ պատահած դժբաղ-  
դութեան մասին, անպատկառ կերպով հայնչ-  
յում է պ. Բարայիանցին և այդ վերջինին է հա-  
մարում իր դժբաղդութեան պատճառը։ Ուրեմն  
Ափսային կարօտութիւն չունէր ինձանից լսելու  
այդ եղելութիւնը (մասնաւոր ուր այդ ժամանակ  
նա ոչ դիւ օտ չէր բժշկւում)։ Դրանով չը բաւա-  
ւականացով, պ. Մէլիք-Աղամեանց փողոցներում  
ծանօթ թէ անծանօթին պատմում էր թէ որպէս  
րժիշկ Բարայիանց լրացրին իրան, ի հարկէ, կո-  
պէս վերջոյնի ուղղելով նրա անձնագրութեան  
դէմէ։ Սխալէս որ այդ եղելութիւնը, մի ժամանակ,  
պ. Մէլիք-Աղամեանի շնորհիւ, ամբողջ քաղաքի  
խօսակցութեան առարկայ էր և ամենին յայտնի  
մի իրողութիւն։ Ուրեմն ո՞վ է մեղաւոր՝ այդ բա-  
նումս,—ես, թէ պ. Մէլիք-Աղամեանց։ Վերջապէս,  
եթէ պարոնը աղնիւ մարդ է, բնչու գոնէ մէկ  
անգամ, լից ցարկայ ընթացքում, լաւ ծանօթ լի-  
նալով ինձ հետ, չէ յանդիմանել ինձ, որ ես նրա վրա  
կարգադրում եմ։

վերջացնելով նամակս, յայտնում եմ անկեղծօրէն, որ, որպէս եւ բոլիշկ Բարապետն կը վկայէ, նրա հետ ոչինչ հայելու չեմ ունեցել, եւ, ինչպէս Թէթիվխեցիք ասում են՝ բժ. Բարապետին հետ բացի զբարեւ, Աստածու բարին՝ից, ոչինչ դուրծ ու յարաբերելովին չեմ ունեցել, որքան ինչպէից զըրդ-նրա եւս պէտք է նրա տղա յարախօսեի:

### Յ. Տէր-Մարկոսեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Համաձայն ներքին գործերի մինիստրի զեկուցանման, թաղաւոր կայսրը բարեհաճեց Ս. Վերնաուդոր-մաճաբար յաճախել 1-ին հնորհեկ Ս. Վլադիմիրի է-րարդ աստիճանի շքանշանը էջմիածնի սինսզի զրօրուորք Տէր-Յովսէփովին:

Երեանի և Գանձակի ժողովրդական ուսումնա-  
սանիւնը: Վերադառնալով Յրջի ստացել է դէյսակի-  
տերի ստատուսի սովետների աստիճանը:

ԲԱՂԱՌԻՑ մեզ գրում են՝ «Գեկտեմբերի 27-ին, Ֆարգապետական ընկերությունն զբաղաբանը, որը լրջեհի պատճառով մի շարքով վաղկամ էր, խորդական անգամների համադուն ջանքերի շնորհ շորից բացվեց։ Գրադարանի մնասի և ուումնաբանի փչացած կահկարասիքների համար լգաբախովություն ընկերությունը վճռել է վճարել լրային 300 ր. որը իսկական գնից չորս անգամ ավելի է»։

Դեկտեմբերի 21-ին, ինչպէս մեզ գրում են Ա. Գ. ՌոմիՅ մի յայն անզդուշովեամբն աործանակից օրձակելով՝ սպանեց իր թուրք բանաւորին:

ԲԱՂՈՒՅՑ գրում են մեզ. «Այլված ուսումնա-  
սանների փոխարեն բնակարաններ արդեն վարձ-  
ած են: Բնակարաններից մէկը պ. Ա. Ազատեան-  
ինն է, որը ձրխարար դիպատու է ուսումնարա-  
ն մինչև յունիս, այսինքն մինչև ամառայ ար-  
ևթաբարդները: Այլ պատիւ է բերում պարոնին:  
Զգուշ ուսումնարանի ստորադրութիւնը չարու-  
թաբարդ է, մինչև այսմ ժողոված է աւելի քան  
2,000 ըստի»:

Մասկայի, Օրենբուրգի և Նիժնի-Նովգորոդի  
աճառականները ղեմկ են ֆինանսների մինիստ-  
րժեանը՝ խնդրելով, որ առևտրական յարմարու-  
ններին համար, բուխարայում հիմնով պետա-

կան բանկեր մի բաժին: Պետերբուրգի քաղաքները-  
հաղորդում են, որ այդ հարցը սկզբապես ըն-  
դունելով թիմն է գտել Ֆինլանդների մեխանիկա-  
թիան կողմից:

Յունվարի 8-ին կայացավ Կովկասեան Դիւղա-  
տնտեսական ընկերութեան ընդհանուր ժողովը։  
Բնակեցւաւ ընկերութեան 1887 թիւ ելեմտից նա-  
խահաշիւը։ Կուտք սպասուում է 10:613 ռուբլի,  
իսկ որոշված է ծախսել 8,705 ռուբլի։ Այգեգործա-  
նաւ դպրոցի համար 1887 թիւն ծախք որոշված է  
11,778 ռուբլի։ Ընկերութեան ընդհանուր ժողովը  
ձայնակի առաւելութեամբ վճռեց 2 հազար ռուբ-  
լի նշանակել իրեն վարձատրութիւն հեղինակնե-  
րի այն աշխատութիւնների համար, որոնք կը  
տպագրւին ընկերութեան «Աշխատութիւններ»  
մէջ։

Միքիլ արդէն հաղորդեցինք, որ Բուհայէի տեղ  
ռուսաց ֆինանսներէ մինիստր նշանակվեցաւ  
Վիշնեգորալսկի: Ի. Վ. Վիշնեգորալսկի եղև է  
պրոֆէսոր. նա վարել է մի ժամանակ Պետեր-  
բուրգէ Տէխնոլոգիական ինստիտուտի վերատեսչի  
պաշտօնը: Վիշնեգորալսկի մասնակցել է զանա-  
զան ակցիօներական ձեռնարկով ինքներուս՝ և  
երկաթուղային ու նուազնացական զանազան  
ընկերով ինքների մէջ: Վերջին ապրիսիւրը Վիշ-  
նեգորալսկի թողեց այդ տեսակ ձեռնարկով ին-  
քներու. նա մի քանի ժամանակ սրանից առաջ նը-  
շանակվեցաւ պետական խորհրդի անդամ, որից  
իստաւ և նշանակվեցաւ-Ֆինանսներէ մինիստր:

Պետերբուրգի լրագրիները հաղորդում են, որ պետական խորհրդին ներկայացրած է մի ղեկու-յումս ուսուցիչ ժողովրդական լուսաւորութեան մի-նիստրութեան կողմից, որով առաջարկվում է եւթի զասարանեանս թէպալեան ուսումնաբանների տեղ հինգեւ հինգ զասարանեան դպրոցներ, որ-տաներից աստարտները իրաւունք չը պէտք է ու-նան լինել մանկու բարձրադրոյն մասնագիտական դպրոցները:

Շնորհակալութեամբ ստացանք թիֆլիսի արա-  
լան պրոդիմազիայի տեսուչ Վ. Մարտինովսկու  
աշխատութիւնը՝ որը խօսում է միջնակարգ դպ-  
րոցներում մայրենի լեզուի և գրականութեան  
դաստատութեան մասին Գրքոյիւ կրում է հետե-  
ւեւ վերապիւրը. «Къ вопросу о преподаваніи  
Отечественнаго языка и словесности въ сред-  
нихъ учебныхъ заведеніяхъ». Աշխատարկողը  
այդ գրքի մէջ խօսում է մայրենի լեզուի և գրա-  
կանութեան դաստատութեան ընդհանուր նշանա-  
րութեան մասին, բացատրելով դաստատութեան  
յի. քանի եղանակները և մեթոդները, հիմնելով  
թէ մի. քանի մանկավարժների և թէ իր անձնա-  
պան տեսութիւնների և փորձերի վրա: Արական  
պրոդիմազիայի տեսուչը, ՚ի միջի ալլըց գրում է  
հետեւեւ համակրութեան արժանի տողերը «Ո-  
րովհետեւ իւրաքանչիւր անհատ, որը ենթարկվում  
է դպրոցի ազդեցութեանը, պատկանում է ոչ թէ  
միայն մարդկութեանը ընդհանրապէս, այլ և յայտ-  
ն ազգութեան, որի մէջ նա պէտք է ապրի և  
սործի, ուստի և նրա ուսուցման մէջ կարևոր դեր  
պէտք է խաղայ այն բոլորի. ծանօթութիւնը, ինչ  
որ ապակէն թէ անդաւն կապ ունի նրա ազգու-  
թեան հետ: Սակայնք հետևում է, որ անդա-  
ւեպ է հաղորդել այդ անհատին որքան կարելի է  
հմարաբան տեղեկութիւններ ինչպէս այն ֆիլի-  
ական և պատմական համադամանքների մասին,  
որոնց մէջ երկար դարերի ընթացքում ապրել է  
ազգութիւնը, և որոնք անշնչելի կնիք են դրոշմը  
նրա բնաւորութեան վրա,—այնպէս և ազգու-  
թեան բնաւորութեան մասին, որը արտայայտ-  
ւում է լեզուի, կրօնի, իրէալիների, տիպերի և  
որովորակայն ամբողջ աշխարհայեցողութեան  
մէջ: Գրքոյիւ բաղկացած է 38 երեսից և տպված  
է 1887 թւին:

ԲԱՐՈՒՅԷ մեզ դրում են. «Բազուի հայոց ծխա-  
նան դպրոցի հրդեհից աղատած կահ կարասիքնե-  
րից շատով գուցե ոչ մէկն էլ չի մնաց, որովհետեւ  
անմը բոլորը լծախած են՝ այլոված, պատուհան-  
ները և դռները ջարդված սենճակների մէջ, ուր  
բժակ մտածը կայ դիշեր և ցերեկ: Կնչպէս լսում  
էք, արդէ՛ք՝ ամբողջերի և քարտէզներից շատերը  
դողցել են: Թէ ինչու ուշադրութիւն չեն դարձ-  
նում հողաբարձները, — անհատկանայակ է:»

ԴՈՐ-ԲԼԹԼԶԻՏԻՑ մեզ գրում էին հետևեալոր: «Տե- ր

դեպի գաւառապետի անխնայ աշխատութեամբ չու-  
ղով բացփելու է մեզանում գիւղական ղեկաւորուն  
Դեղատան կապալաւորուն քաղաքապետական գու-  
մարից 500 թուղի օժանդակութիւն է ստանում  
Տեղիս առեւտրը շատ անհալիանձելի դրութեան  
մէջ է գտնուում, փողի սատիկ պակասութիւն է:  
Այժմ ցորենը մեղանում արժէ խաւկարը 15 ռ.,  
գարբի 10 ռ., ալիւրը 20 ռ., կտաւաւը 30  
թուղի: Առողջ չը կայ:

Մեզ գրում են Ս. ՊԵՏԵՐՅԱՆԻՐԳՅԱՆ, որ այդտեղ մի հայ երիտասարդ, պ. Ըբեմականց, վարչապետացի, որ իր ուսումը աւարտել է մայրաքաղաքի երաժշտական կոնսերվատորիայի մէջ, արտակարգ առաջադիմութիւն անելով երաժշտութեան մէջ, զբաղւած է այժմ արեւելան, մասնաւոր հայ-փոքր ժողովրդական երգը և երաժշտութիւնը եւրոպականի լիտարգրելով և յարմարեցնելով: Պարոնը համո հմուտ երաժիշտ, համ էլ ինքն հայաստանցի լինելով, ուրիշն լաւ ծանօթ մեր ժողովրդական երգեցողութեան հետ, համաձայնիլ է արեւելեան երգեցողութիւնն ու երաժշտութիւնը եւրոպական կոնսերվատոր մշակելու նոյն իսկ մայրաքաղաքի երաժշտական գլրոցի, կոնսերվատորիայի յանձնարարութեամբ:

ԱՐԴՐՆԱՍՑԻՑ. Որք ինդիսականը մեզ գրում է:  
«Ամենայն բանի առատությունն և էականությունն է  
այսպիսի Շիրակում: Տարածությունն հիանալիությունն և  
անասունների ցառ չը կան ամենինա Յորենի ա-  
ռևտուրը փղըղը բարձրացել է առնչողական  
շատաժեշտայն պատանուդ: Գանի մի ժամանակին ա-  
ռաջ ցորենի սոմարը (18 պոռ) արժեք այստեղ  
8 ռ. 50 կոպ., իսկ հիմա բարձրացել է մինչև 10  
ռ. կամ 10 ռ. 50 կ.: Այստեղից էլ ցորենը ար-  
տահանում են Եւրոպայ: Կտանաորի գինը շատ է  
սխալվել և առաջինը լիայ: Գարին սոմարը 4 բուրբի  
արժեք: Փահանջը քիչ է:»

Ստացանք «Вестѣды и чтение, начальный учебникъ русскаго языка для армянскихъ школъ» վերնագրով դասագիրքը, որ կազմել է պ. Ե. Թառարբեգեանը Այդ դասագիրքը այնպիսի ողորմելի մի բան է թէ արտաքուստ և թէ բովանդակութեան կողմից, որ դրան դասագիրք անուանելը չէ կարելի, իսկ երեխաների ձեռքը տալը՝ յանցանք։ Այնուհետք ենք համարում խօսել գրքի բովանդակած նիւթերի մասին, որոնց մէջ շատ յօդուածներ ոչինչ միայն չունեն, շատ յօդուածներ անգոյն, միմեանց հակասող զաղախարհներ են պարունակում, շատ յօդուածներ էլ անմասնելի են հայ երեխաներին, և բոլորն էլ լուրի են որ և ինչ սխառնակից, դասաւորութիւնից և կանոնաւորութիւնից,—այդ բոլորի մասին աւելորդ ենք համարում խօսել, որովհետեւ այդ դասագիրքը կոչվածը այնքան անտանելի է սովորողութեան կողմից, որ աւելի նման է սըր-սազը և պահան թի և բիւրի, քան մի դասագրքի, որի կազմողը առաջարկում է հայոց զպրոցներին։ Երբեմանի համար, գրքի բառարանում, որը բաղացած է միայն 15 երեսից, մենք գտանք, շտապ աշխուժ մինչև 150 սխալ։ Մարդ զգուշացնով դէն չպարտում այդ գիրքը, որը կարծէք տպաւանի շարժարների ձեռքից դուռ առաջին ազգանի է ուրա զալին Խուս և հայ լեզուի մէջ այնքան զգետ լինելուց յետոյ, ինչպէս որ երեւում է այդ գրքի կազմողը, այնքան էլ անհոգութեամբ վերաբերվել դէպի գործի տեխնիական մասը, դէպի գրքի սրբագրութիւնը, կարող է անել միայն այն ձևով, որ ամենին փորձված չէ։ Այդ տեսակ րատարակութեան մէջ ուրիշ ոչինչ ձգտում է չկարելի նկատել, քացի չհասարակութեան խտանելից, որոնքցը զրգված կազմողը շտապել յունակների սկզբներին լոյս ընծայել Մ. Վարդա-նանի տպարանից այդ գիրքը, որպէս զի իւր և սասգիրք մտցնալի հայոց զպրոցներում, որտեղ, որ կանոնաւորութեան համաձայն, պատրաստա-նաններում յունակարից սկսվում են ուսու լեզուի ուսու պարապմունքները։ Այդպիսի դասագրքեր արտածելուց պէտք է զգոյշ լինել իւրաքանչիւր

Կիրակի, ամսիս 11-ին, ԹԻՖԼԻՍԻ Ժողովարանում՝  
այսպես պարանաղեն յօգուտ Կովկասի Հայոց  
սրբգործական ընկերութեան: Հասարակութիւն  
նշան կար, որ ասեղ զգեւու սեղ չը կար: Պա-  
ռւմ էին մինչև ժամի հինգը: Կահլիճի զոս անկիւն-



77—100